կերտները արձակուրդի ժամանակ իրանց տներում կամ դրսում որեւիցէ անկարգութիւն արած լինէին, ի հարկէ, այդ կարծեցեալ անկարգութիւնը ստուգել անհնարին էր, ուրեմն պէտք էր, թէ մեղաւորին եւ թէ անմեղին հաւասարապէս պատժել... Այս բարբարոսութեան մէջ մի ուրիշ միտք եւս կար: Ինչպէս լաւ ձիաւորները ձիու վրայ նստածին պէս տալիս են նրան մի քանի մտրակի զարկ, որ թմրած անասունը զգաստանայ, գրգռոի, — այնպէս էլ մեր վարժապետը հանգստի օրերից յետոյ լարում էր մեր մտաւոր ուժերը ճիպոտներով, որ սթափոինք, որ վայրենացած կեանքից կրկին ընտելանանք դպրոցական տաժանակիր կեանքին...

Մեր վարժապետը չարասիրտ մարդ չէր, ընդհակառակն, նա շատ բարի էր: Այս բոլոր խստութիւնները, այս բոլոր անգթութիւնները առաջ էին գալիս նրա մանկավարժական հասկացողութիւնից: Նա համոզուած էր, որ առանց ծեծի, առանց տանջանքի աշակերտը ոչինչ չի սովորի: Նա այնքան հաւատում էր իր ֆալախկային, որքան հաւատում էր իր թիլիսմաններին եւ կախարդական արարողութիւններին, որոնցով հրաշքներ էր գործում...

Երբ պատմում էի մօրս դպրոցում կրած իմ տանջանքները. նա էլ միեւնոյնն էր հաստատում եւ սովորաբար պատասխանում էր. — «որդի, մինչեւ ծեծ չուտես, մինչեւ նեղութիւն չքաշես, բան չես սովորի»: Ապա ինչո՞ւ այնքան ծեծ էի ուտում, այնքան տանջւում էի, դարձեալ ոչինչ չէի կարողանում սովորել:

Ես յիմար տղայ չէի, ես շատ սրամիտ էի, երբ տատս մի հեքիաթ էր պատմում. ես միանգամից բոլորը սովորում էի. երբ մեր քաղաքում աշուղ էր գալիս, երգ էր երգում, վէպ էր պատմում, ես իսկոյն սովորում էի: Իսկ դպրոցում ինչո՞ւ այնքան բթամտացայ, որտե՞ղ կորաւ իմ սրամտութիւնը...

Տատիս հեքիաթը, աշուղի երգը ես հասկանում էի, դրա համար շուտ էի սովորում, բայց վարժապետիս դաս տոած բաներից ոչինչ չէի հասկանում. ինձ երեւում էր, որպէս թէ նրանք հայերէն չլինէին: Գիշեր ու ցերեկ դասս սերտում էի ու սերտում, գլխումս մի բան չէր մտնում. հէնց որ վարժապետիս աչքը ընկնում էր աչքիս, ես սարսափում էի, միտքս շփոթւում էր, գիտցածս մոռանում էի...

Ես մինչեւ այն աստիճան ընկած էի թէ մտքով եւ թէ հոգով, մինչեւ այն աստիճան սպանուած էին իմ մէջ մանկական ուժերը, որ բոլորովին հաւատում էի, երբ վարժապետս բարկանալով ասում էր. — «սատանայի լակոտ, քեզանից մի օրինաւոր բան չի դուրս գայ»...